

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՀԱՄԱԴՕՏԵԱԼ

ԻՍ·ԱԼՓՈՆՍՈՍԷ ԼԻԿՈՒՈՐԵԱՅ

Ի ԶԵՌՆ

Տ· ԵԳՈՒԱՐԴԱՅ Վ· ՃԻՒՐՄԻՒՋ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՇԻՐԱԿԱՑ

Ի ՄԻՒԹԱՐԵԱՆ ՈՒԽՑԷՆ

Որպէս ծեսականն Աստուածաբանութիւն բարձրագոյն քան զամենայն գի-
առութիւնս է, այսպէս և բարոյականն քան զբնաւ գիտութիւնս կարեոր : Սա ուղ-
ղեակ է ամենայն գործոց մարդոյ . սա ոչ միայն բանաւոր կացուցանէ զմարդ, այլ
և հոգեոր . և սա է որ 'ի նպատակ անդր իւր առաջնորդէ մարդոյ : Եթէ ուամիկն
անպարտական է և անբաւական իսկ ուսանելոյ զգիտութիւնս զայս, սակայն ի-
րաւոնք են նորա պահանջելոյ զսոյն յառաջնորդաց իւրոց, որոց յանձն է 'ի
ծեառնէ ցուցանել նմա զճանապարհ յաւիտենիցն կենաց : Նմա հպատակել և եթ
անկ է պարտուց իւրոց, իսկ քահանային ցուցանել նմա զպարտս նորա . զաբիր
է քահանայ, առ 'ի տալ ժողովրդոց զհրամանս տեառն : Այսը աղագաւ պատուի-
րէ Աստուած 'ի ձեռն մարգարէին . « Զի շրմունք քահանային զգուշասցին գի-
տութեան, զի բերան ծեառն ամենակալի է » : Վասն որոյ 'ի խոճէ մուաց պարտ
է քահանայի ուսանել զայս գիտութիւն, և վասն ուսանելոյ՝ պարապել 'ի սոյն
զամենայն կեանս իւր : Զի զոր վասն մարմնաւոր բժշկութեան ասաց բժշկապետն,
կեանք սուդ, արուեստ երկայն, զնոյն և զհոգեւոր բժշկութենէ է ասել : Են որք
բարոյական՝ զիսելս և զխոհականութիւն մարդոյ վարկանին, այլ ոչ յիրաւի . ա-
պաքէն առանց խելաց և խոհականութեան չմարթի և մարմնաւորն բժշկութիւն,
այլ նորօք և եթ չկարէ ոք բժշկել, եթէ ոչ նախ զբնութիւնս ախտից և զզօրու-
թիւնս զեղոց ուսանիցի : Բազմապատիկ ևս հոգւոյ են ախտակրութիւնք, և ըստ
ազգի ազգի ախտակրութեանցն դեղք այլեայլ, զորս կանոնք և սահմանադրու-
թիւնք եկեղեցւոյ, և աստուածաբելոց արանց վարդապետութիւնք աւանդեն, և
որոց ուսումն ընդ խոհականութեան յարդարեն զբարոյական : Որ առանց այսո-
ցիկ առաջնորդելն կամիցի այլոց, զնէ զանձն 'ի վտանգի տէրունական վճռոյն .
« Կուրի կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ, և երկողեան 'ի խորխորատ անկա-

Նին»։ Խսկ որ 'ի վտանգէ աստի զգուշացեալ՝ բնաւ խսկ և յառաջնորդութենէ հրաժարի, ծայրայեղ՝ 'ի հակառակն անկանի՝ 'ի քահանայական պարտուցն վեր։ Ջանալով, որպէս ցուցեալ է 'ի մատենիս 'ի գլուխ ժջ, թիւ 126։

Այսոցիկ աղագաւ ձեռն արկի յառաջիկայս վաստակ, զսրբոյն Ալփոնսոսի թարգմանօրէն տալ մերազնեայց զբարոյական Աստուածաբանութիւն, ընդունելի ամենեցուն, և 'ի սրբոյ առաքելական գահէն վկայեալ ըստ ողջմոտութեան։ Սակայն վասն այլևայլ պատճառաց հարկ եղև ինձ հրաժարել 'ի ճիշդ թարգմանութենէ նորին։ յորոց մի և այն է, զի մատենագիրս՝ որ զամենայն կեանս իւր 'ի սոյն գիտութիւն և յընթերցումն ամենայն բարոյականաց պարապեալ՝ կարողն էր 'ի տարածայնութեան կարծեաց նոցա սահմանել զլաւագոյնն և տալ վճիռ, ինքն առ խոնարհութեան և երկիւղածութեան հազիւ զկարծիս իւր բացատրէ որպէս հաւանականագոյն, և վասն այնորիկ ամենայն ուրեք զվկայութիւնս համաձայնելոց ընդ իւր աստուածաբանից կարեոր համարի 'ի ներքս ածել։ Սմին իրի հարկ էր ինձ ինքնադիմաբար՝ և ոչ թարգմանօրէն՝ 'ի դիմաց նորա խօսել, առ 'ի կարող լինելոյ զկարծիս նորա բազում ուրեք տալ 'ի կանոն, զորս ինքն յետ քննելոյ զվարդապետութիւն աստուածաբանից առ հասարակ՝ համարի հաւանականագոյն։ Թող զի 'ի մատենիս յայսմիկ ոչ ոճ ինչ և եղանակ բանից մատենագրին խնդրի, այլ բացայայտութիւն՝ որ ազատ թարգմանութեամբ դիւրագոյն յաջողէր ինձ։ Սակայն ըստ իմաստիցն չիք իմ՝ ուրեք խոտորեալ 'ի կարծեաց սրբոյ մատենագրիս, այլ ըստ ամենայնի հետևեալ վարդապետութեան նորա յաներկեան ապահովութիւն։ զի ուղղափառ հաւատոց մասն է և ապացոյց, ոչ ինչ նուազ քան զտեսական աստուածաբանութեան, բարոյականին ողջմոտութիւն։

Այլ քանզի ոչ 'ի մէնջ է յօրինեալ առաջիկայս մատեան, այլ զրեթէ թարգմանեալ, կարեոր համարիմք զեկուցանել աստ հանրաբար՝ զոր ուրեք ուրեք 'ի ստորես իջից ծանուցեալ է մեր, զի որ ինչ 'ի սմա յաղազս եկեղեցական բարեկարգութեանց 'ի բնագրէ սրբոյ մատենագրիս ըստ աւանդելոյ նորա վասն արեմուեան եկեղեցւոյ 'ի կիր առեալ եմք, այնզքիկ ոչ խափանեն զազգային եկեղեցական կանոնս մեր, ըստ յայտարարութեան նորին խսկ տրիդենտեան ժողովոյ։ Այլ քանզի առ մեզ չե ևս վաւերաբար հրատարակեալ են կանոնագիրք, և ոչ ամենայն ազգային կանոնք մեր անկորուստ առ մեզ հասեալ, և ոչ խսկ 'ի միօրինակ սովորութենէ ազգիս ըստ հանգամանաց և հարկի ժամանակաց կանոնք հաստատեալ, չէր մեզ օրէն՝ առանձին դատողութեամբ սահմանել 'ի կանոն որ ինչ 'ի գիրս մեր գտանին աւանդք, կամ արտասահման առնել որ ինչ 'ի կանոնաց տրիդենտեան ժողովոյ և 'ի հոռվմէական սահմանագրութեանց մուծեալ են առ մեզ։ Առաջնորդաց ազգիս է անկ՝ միաբանութեամբ դատել, ընտրել և սահմանել որ ինչ 'ի նախնեացն մերոց աւանդեալ է 'ի կանոնգիրս, կամ 'ի սովորութենէ ընկալեալ, և հասարակաց հաւանութեամբ ընուլ զթերին։